թուով ընկերաց, որոնք ամենքը կրնան զինքը կոչել մի և նոյն վայրկենին մէջ, դժուարաւ կրնայ գիտնալ թէ արդեօք որ գործիքէն ձայնն ելաւ։ Այս անպատշաճութեան վրայ աշխատելով ե՛ր ևնելին Աստէր գաղ, հնարեց աւելցնելու կաուէրի հեռախօսին գործիք մը, որուն ձեռքով կրցաւ ունենալ տեսանելի նշան մը — պատասխանեւ բառը — որ կ'երևայ պզտի պատուհանի մը մէջ որ իւրաքանչիւր ընկերաց թըւոյն տակ բացուած է։ Այս նշանը հեռախօս գործւոյն մագնիսէն բռնուած է, քանի որ գործիքը դադարման վիճակի մէջ է, կամ իրարու հետ խօսակցութիւն մ'ընելուն ժամանակ։ միայն այն ատեն կը բաժնուի և կ'ելնայ, երբ կը փչես՝ կոչման նշանը զրկելու համար։ Ըրեմն 7 թուոյն « պատասխանէ » բառէն էր որ տեսաւ գործակատարը և իմացաւ ով զինքը կը կանչէ։

Երբոր 7 և 12 թիւերն կը լմնցընեն խօսակցութիւնին, կը փչեն մի և նոյն ժամանակ իրենց հեռախօս գործեաց մէջ, բառը կ'երևայ, և գործակատարը գիտէ որ հասեր է ժամանակը հաղորդակցութիւնը կտրելու և գործիքները դադրեցընելու։

Լուսագրական նոր յառաջադիմութիւն։ — Շաբոնի մէջ գտնուեցաւ լուսագրական նոր յառաջադիմութիւն մը անծանօթ յիւրոպիա, այն երկրի ջրդեղ (վեռնիճ) չինող արհեստաւորք դիտեցին որ իրենց ձեռագործական կիրառութեան նիւթերէն մին շատ զգայուն է լուսոյ ազդեցութեան. և ասիկայ է գորշ-կարմրագոյն բաղկացութիւն մը, որ մոմի սերտութիւն ունի, և երբ կը դրուի քանի մը ժամ արեգակնային լուսոյ ազդեցութեան ներքև՝ քարի պէս կը պնդանայ։ Այս գիւտիս ճարտնացի հեղինակն, առնելով այս նիւթս — որ հաւանականաբար մաղտաքուոյ տեսակ մ'է, թէպէտ և ընդհակառակը կը հաստատեն — կը տարածէ զայն մետաղական թիթեղան մը վրայ, և շուտով կը դնէ չէկոգական ապակիոյն ետև։ Գրեթէ տասն և երկու ժամ այնպէս դրուած կը մնայ. առարկային պատկերը պնդացած կ'ըլլայ այն ժամանակն, մինչդեռ անոր մնացած մասունքը՝ որոնք լուսոյ ազդեցութիւնը չեն կրած՝ կակուղ կը մնան և փայլուն, այնպէս որ կամ խոզանակով և կամ ուրիշ մեքենական գործողութեամբ մը կրնան վերցուիլ. թիթեղը կը ծառայէ նաև քարեղէն փորագրութեան տեղ։ Այս գիւտիս հեղինակը այնպէս ծածուկ կը պահէ, որ դեռ անոր մանրամասն պատմութիւնը դեռ ևս լաւ ծանօթացած չեն մեզի։

Ապակեայ մանաւ. — Գերմանիոյ մէջ, 'ի կանտէնֆրայ, վիեննացի Ա. Բըրէնվէլ Լուշկոը, իր ապակիոյ գործատան մէջ ապակիով զանազան առարկաներ կը շինէ. զոր օրինակ, կրծկաք, գլխարկք, փողպատք, քօղք, և այլն։ Ոչ միայն կը մանէ, այլ և հասարակաց առջին կը հիւսէ։ Ինքը գիւրաբեկ ապակին գալարուն թելի կը վերածէ, և դեղեցիկ և տաքցուցիչ զգեստներ կը շինէ, որոնց հետ կը խառնէ անյայտ բաղադրական նիւթեր, որով ապակոյն բնութիւնը կը փոխուի։ Կը շինէ նաև ապակիով սպիտակ կաշէի դաստակապք, և կանանց ծամ, որ իրականէն աւելի գեղեցիկ են։ Իսկ ապակիէ բուրդն, ճշմարտէն զրեթէ անկարելի է որոշել։

---

digitised by A.R.A.R.@